այլ թշուառութեան և տառապանաց ականատես լինել և վկայ. դեռ ևս փոքրիկ տղայ, գողցես հրաշքով ազատած հայրենի ծածքին կրակին միջէն, այժմ ևս ոչ առաւել մխիթարական վիճակի մէջ կը գտնէր իւր ծննդեան քաղաքը։ Ինչպէս ազգիս շինութեանց աւերակները՝ նոյնպէս փնտռեց գտաւ նա՝ ազգիս փշրանք կամ խեղճերանք քանի մի հայ ընտանիք, նոքա ևս հարստահարեալ և ազքատ վիճակի մէջ։ Շատ անգամ պատահեցաւ նմա մտնել Հայոց դատաստանին մէջ, ուր աչքին ծայրով կը խուզէր գտնալ մնացորդ ինչ հայրենեաց։ Նա իբրև թարգման՝ բան առ բան այլազգեաց քատրին ականջը կը հեղուր, դատելոց զրուցածները, իրաւունքները. ձեռքէն բան չէր գար, կամ խիստ քիչ բան կու գար պաշտպանելու իւր համազ ֆքը։ Այն մեծ Հայոց հրապարակն, որոյ վրայ շինուած էր այդ դատարանն, որոյ երբեմն Հայոց առևտուրն և գործունեայ կեանքը մեծ շինութիւն և կենդանութիւն կու տային, խուլ և վայրենի փողոցի տեսիլ ունէր։ Նորա մեռելութիւնը երբեմն կը կենդանացընէին կեղտոտ որդիքն Իսրայելի, և այլ երբեմն խեղճ քրիստոնեայ կալանաւորք, զորս յատեան հարցափորձի կը քաշէին չաուշներն։

Այս գրից մէջ մնաց Կամենից 27 տարի մինչև 1699։ Այսորսոյ տասը տարի ականատես եղաւ այդ սրտամաշ տեսարանին. այլ նորա ազնուական հոգին առաւել ընտրեց կալ մնալ հոն և վշտակից լինել ազգիս տառապանաց, քան Իլվովի մէջ հանգիստ կեանք վարել։ Վարձատրեցին Երկինք նորա առաքինութիւնքը. քիչ ժամանակէն պիտի տեսնենք զնա, սոյն այս աղետաւոր Կամենիցի մէջ՝